Դասի պլան

**Դասի պլանի նմուշ**

**5-րդ դասարան, Թեմա 1, Դաս 1**

| | |
|---|---|
| **Առարկա**<br>**Օտար լեզու** | անգլերեն |
| **Դաս 1 նպատակ**<br>**Խթանման փուլ** | Դուրս բերել **նախնական գիտելիքներ** նախասիրություններ և հետաքրքրություններ թեմայի վերաբերյալ, ինչպես նաև քննարկել ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու գաղափարը: |
| **Վերջնարդյունքներ** | **ՕԼ5-ՔՍՄ-Մ.1**<br>Պատասխանել տրված հարցերին՝ արտահայտելով և հիմնավորելով իր կարծիքը |
| **Գործողություններ** | **Խթանում , 7 րոպե**<br>1. Ուսուցիչը ներկայացնում է նախասիրություններ/ հետաքրքրություններ թեմային բնորոշ որևէ նկար և աշակերտները փորձում են կռահել թեման:<br>2. Ուսուցիչը հարցեր է տալիս աշակերտների նախընտրությունների և ազատ ժամանակը անցկացնելու մասին, և ծավալում է քննարկում:<br>**Ընթացք**<br><br>**Քննարկում՝ հարց ու պատասխան, 5 րոպե**<br>3. Ազատ ժամանակի կարևորությունը<br>4. Ազատ ժամանակը տնօրինելու ձևերը<br><br>**Նախնական գիտելիքի դուրսբերում, 10 րոպե**<br>1. **ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ Սովորել-Սովորել եմ)**-ի առաջին (**Գիտեմ**) և երկրորդ (**Ուզում եմ Սովորել-**)վանդակների լրացում նախասիրություններ/ հետաքրքրություններ թեմայով,, աշխատանք խմբերով կամ զույգերով<br>2. Արդյունքների ներկայացում<br>**Առաջադրանքների կատարում, 15 րոպե**<br>1. Դասագրքի էջ 2-ի վարժությունների կատարում և ստուգում<br>2. Տրված բառապաշարի ամրապնդում երգի կամ խաղի միջոցով (կռահում, մնջախաղ, և այլն).<br>3. Լրացուցիչ վարժությունների կատարում<br><br>**Ամփոփում, 6 րոպե**<br>1. **ԳՈՒՍ** -ի վերջին վանդակի լրացում (**Սովորել եմ**) |

| | |
|---|---|
| | 2. Արդյունքների ներկայացում<br><br>**Տնային աշխատանքի հանձնարարում, 2 րոպե**<br>3. Ամրապնդել բառապաշարը<br>4. Ներկայացնել այն հաջորդ դասին |
| **Միջառարկայական կապ(եր)** | Նախապես կերպարվեստի դասին աշակերտները պատկերում են իրենց նախասիրությունները/ հետաքրքրությունները և օտար լեզվի դասին տվյալ լեզվով ներկայացնում են, թե ինչպես են կազմակերպում իրենց ազատ ժամանակը: |
| **Ուսուցման տարբերակված մոտեցում** | **Բառապաշարի ուսուցման տարբերակում**<br><br>Հետաքրքրություն/Նախասիրություն թեմայի բառապաշարը մի խմբում կարող է ներմուծվել կամ ամրապնդվել **խաղի միջոցով**, իսկ մեկ այլ խմբում՝ թղթային **առաջադրանքների միջոցով՝** ելնելով աշակերտների կարողություններից, հետաքրքրություններից: |
| **Ռեսուրսներ** | • Դասագրքի վարժություններ<br>• Երգ՝ նախասիրությունների վերաբերյալ<br>• Լրացուցիչ վարժություններ հետաքրքրությունների վերաբերյալ |
| **Անդրադարձ** | |